Հավելված
ՀՀ վարչապետի 2011 թ.
սեպտեմբերի 8 -ի N 850 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԻԶՆԵՍ-ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարման պատասխա-նատուները	Կատարման ժամկետը
1.	«ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ի «Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները, չափանիշները և կարգը հաստատելու մասին» N 1555-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	1) Որոշմամբ սահմանված գիտական կենտրոնների ստեղծման չափանիշների հստակեցում՝ գիտական կենտրոն ձևավորելու նպատակահարմարության վերաբերյալ հանձնաժողովի եզրակացության օբյեկտիվությունն ապահովելու համար: 2) Որոշմամբ հաստատված կարգում ժամկետների սահմանում: 3) Կարգի 3-րդ կետով սահմանված գիտական կենտրոնի ձևավորման հայտում ներառվող տեղեկատվության և հայտի հետ ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի սահմանում: 4) Կետ 5-ում հանձնաժողովի կողմից հայտերը նաև ըստ անհրաժեշտության քննարկելու դրույթի ավելացում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ

2.	**«**Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ), պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման, գիտական փորձաքննության և գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ձևավորման, գիտական ծրագրերի և թեմաների հայտերի երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի NN 1121, 1122 և 1123 որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն	1) Գիտական ծրագրերի ընտրության չափանիշների սահմանում: 2) Գնահատման մեխանիզմի, գնահատման ընթացակարգի սահմանում: 3) Գործող մասնագիտական խորհուրդների փոխարեն գիտական ծրագրերի ընդունման հանձնաժողովի ստեղծման դրույթի ամրագրում: 4) Հանձնաժողովի աշխատակարգի, իրավասությունների և պարտականությունների սահմանում: 5) Գիտական թեմաների հայտերի գնահատմանը տարբեր փորձագետների ներգրավվման չափանիշների, փորձաքննության կարգի, փորձագետների իրավասությունների և պարտականությունների սահմանում: 6) Գործընթացի իրականացման ժամկետների սահմանում: 7) Հայտարարություններում ներառվող տեղեկատվության, հայտերի, հաշվետվությունների, պայմանագրերի օրինակելի ձևերի հաստատում կամ հանձնարարական՝ լիազոր մարմնի կողմից դրանք հաստատելու վերաբերյալ: 8) Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ), նպատակային-ծրագրային ֆինանսավորման ընթացակարգերի սահմանում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ

	ներկայացնելը	9) ՀՀ կառավարության որոշման ընդունումից հետո նշված հարցերի կանոնակարգմանը ուղղված ՀՀ կրթության և գիտության նախարարի և ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե նախագահի բոլոր հրամանների արդիականացում և/կամ ուժը կորցրած ճանաչում:		2011թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ
3.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	1) Կանոնադրությամբ ամրագրված գործառույթների անհարկի կրկնությունների բացառում («զ» ենթակետի երկրորդ մասը, «ժդ^{2}», «լբ», «լգ», «լդ» ենթակետերի վերանայում): 2) Մեկանգամյա իրականացվող գործառույթների խմբավորում մեկ կետի տակ՝ որպես քաղաքականության մշակման բաղադրիչներ (10-րդ կետի «զ», «է», «ժզ»-ի երկրորդ մասը, «ժէ», «ժթ», «Ժթ^{2}», «Ժթ^{3}», «թ^{6}», «իա», «իբ», «իե^{3}», «իը», «լ», «լբ» և «լդ» ենթակետերը): 3) Լիցենզիաների տրամադրմանը վերաբերող կետերի ուժը կորցրած ճանաչում («զ» ենթակետի երկրորդ մասը, «զ^{1}», «զ^{4}», «զ^{5}» ենթակետերը): 4) Կանոնադրության իե)^{1} կետով ամրագրված գործառույթի վերաշարադրում հետևյալ խմբագրությամբ՝ «Կրթության և գիտության համակարգերի որակի և արդյունավետության մոնիտորինգ և գնահատում»: 5) Նոր՝ ժէ)^{1} կետի ավելացում հետևյալ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ

		խմբագրությամբ՝ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերով պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ուսուցմամբ տեղերի ու մասնագիտությունների ձևավորում և ըստ ուսումնական հաստատությունների բաշխում»: 6) Նախարարության կառուցվածքի վերանայում և համապատասխանեցում իրեն վերապահված գործառույթներին:		
4.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	1) Կանոնադրությամբ ամրագրված գործառույթների հստակեցում՝ չիրականացվող կամ մասնակի իրականացվող գործառույթների վերանայում ((5), (7), (11) կետերը), ընդհանուր ձևակերպումների կոնկրետացում ((2), (6), (9), (10,) (15) կետերը): 2) Կոմիտեի կառուցվածքի վերանայում և համապատասխանեցում իրեն վերապահված գործառույթներին:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ
5.	«Հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգը հաստատելու մասին»	1) Դասագրքերի գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման ընթացակարգի և դրանց աշխատակարգի հաստատում: 2) Առարկայական հանձնաժողովների կազմերում ընդգրկվող մասնագետների համար հստակ չափանիշների սահմանում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ

	ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009թ. օգոստոսի 21-ի N 752-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում			
6.	«Սփյուռքի հայ կրթօջախներին դասագրքերի տրամադրման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	Գործընթացի կանոնակարգում՝ 1) Սփյուռքի հայ կրթօջախներին դասագրքերի տրամադրման գործընթացն սկսելու ժամկետների, գործընթացի հաջորդական քայլերի, ժամկետների և պատասխանատուների սահմանում: 2) Անհրաժեշտ դասագրքերի նկատմամբ Սփյուռքի հայ կրթօջախների կարիքների գնահատման և գնահատման մեխանիզմի իրականացման դրույթի ներառում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ
7.	«Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման կազմակերպման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	Գործընթացի կանոնակարգում՝ 1) Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման կազմակերպման գործընթացի հաջորդական քայլերի պատասխանատուների և հնարավոր ժամկետների սահմանում: 2) Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման կարիքների գնահատման և գնահատման մեխանիզմի իրականացման դրույթի ներառում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ
8.	«Համահայկական օլիմպիադաների կազմակերպման	Գործընթացի կանոնակարգում՝ 1) Համահայկական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման գործընթացի	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ

	ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	հաջորդական քայլերի, ժամկետների և պատասխանատուների սահմանում, 2) Օլիմպիադայի հարցաշարերի մշակման գործընթացի կանոնակարգում:		
9.	«ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն որոշմամբ հաստատված կարգով ՀՀ քաղաքացիներին տարկետում տրամադրելու գործառույթների իրականացման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. սեպտեմբերի 16-ի N1413-Ա/Ք հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	1) Գործընթացի իրականացման ժամկետների և պատասխանատուների սահմանում: 2) Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետի, փաստաթղթերում ի հայտ եկած թերությունների վերաբերյալ քաղաքացուն տեղեկացման ձևի և ժամկետների սահմանում: 3) Մերժման վերաբերյալ քաղաքացուն գրությամբ տեղեկացման ժամկետի սահմանում: 4) ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացնելու ժամկետի սահմանում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ
10.	«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը հաստատելու և	1) Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ձևերի սահմանում: 2) Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների ձևավորման նկատմամբ պահանջների սահմանում, աշխատակարգի հաստատում: 3) Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվողականության դրույթի և	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ

	«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում պետական քննական հանձնաժողովների մասին» կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 1997 թվականի մարտի 3-ի N 13-ՔՆ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	ընթացակարգի ամրագրում: 4) Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաստատման ընթացակարգի, հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատելու կամ մերժելու հիմքերի սահմանում: 5) Ամփոփիչ քննությունների անցկացման ընթացակարգի հաստատում: 6) Բողոքարկման մեխանիզմի ներդրում:		
11.	«Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի մրցույթի անցկացման (բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի, ասպիրանտուրայի (ինտերնա-տուրա, օրդինատուրա) և դոկտորանտուրայի երկարատև վերապատրաստման ծրագրերով) կարգը	1) Մրցութային հանձնաժողովի աշխատակարգի սահմանում: 2) Թերի կամ բացակայող փաստաթղթերը լրացնելու նպատակով ժամկետների սահմանում, 3) գրավոր բողոքի հրապարակման պահանջների և ժամկետի սահմանում: 4) Մրցույթի հարցազրույցի փուլի հարցերի շրջանակի, բնագավառների, բարդության աստիճանի սահմանում: 5) Հարցազրույցների անցկացման ընթացակարգի սահմանում: 6) Մրցութային հանձնաժողովի կողմից մրցույթի հաղթողների վերաբերյալ որոշում կայացնելու չափանիշների սահմանում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ

	հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.01.2006թ. N 27-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	6) Պայմանագրի օրնակելի ձևի հաստատում:		
12.	«ՀՀ կրթության և գիտության նախարարի «ՀՀ ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բացման և դադարեցման փորձաքննության չափանիշները հաստատելու մասին» 2002թ. դեկտեմբերի 23-ի N 694 հրամանում փոփոխություններ և լրացում-ներ կատարելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	1) Հրամանի վերնագրի վերաշարադրում հետևյալ խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բացման և դադարեցման փորձաքննության չափանիշները և փորձաքննության անցկացման կարգն ու ժամկետները հաստատելու մասին»: 2) Ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի սահմանում: 3) Հանձնաժողովի աշխատակարգի սահմանում, 4) փորձաքննության անցկացման կարգի, պատասխանատուների և ժամկետների սահմանում: 5) Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի դադարեցման վերաբերյալ դրույթի՝ ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի դադարեցման համար փորձաքննության անցկացման հիմքերի և դեպքերի սահմանում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ
13.	«ՀՀ կրթության և գիտության նախարարի «ՀՀ	1) Պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման և բաշխման	ՀՀ կրթության և գիտության	2011թ. նոյեմբերի 2-րդ

	հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգերը հաստատելու մասին» 2010 թվականի հունիսի 22-ի N 609- Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	գործընթացի իրականացման քայլերի ծամկետների սահմանում: 2) Ուսումնական հաստատությունների կողմից տրամադրված փաստաթղթերի վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ձևերի սահմանում: 3) Ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի բաշխման, հաշվառման և պահպանման նպատակով էլեկտրոնային բազա ստեղծելու վերաբերյալ դրույթի ներառում: 4) Բազայում ներառվող տեղեկատվության և բազայի վարման կարգի հաստատում: 5) Ավարտական փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրման ընթացակարգի նախատեսում, սահմանելով՝ • դիմումը ընդունող մարմինը, • ավարտական փաստաթղթի կրկօրինակը տրամադրող (այդ թվում նաև լուծարված և իրավահաջորդ չունեցող ուսումնական հաստատության կողմից տրված կորած փաստաթղթերի դեպքում) մարմինը, • կրկօրինակի տրամադրման ժամկետները, մերժման հիմքերը, • կորած փաստաթղթի տրամադրում միայն դիմումի հիման վրա դրույթի ամրագրում:	նախարարություն	տասնօրյակ
14.	«Պետական նմուշի ավարտական փաստաթղթերի իսկության հաստատման	Գործընթացի կանոնակարգում. Պետական նմուշի ավարտական փաստաթղթերի իսկության հաստատման ընթացակարգի	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ

	կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	հաստատում՝ սահմանելով գործընթացի հաջորդական քայլերի ժամկետները և պատասխանատուներին:		
15.	«Կրթության և գիտության ոլորտների զարգացման ծրագրերի մոնիթորինգի և գնահատման կարգերը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	1) Կրթության և գիտության ոլորտներում մոնիթորինգի իրականացման կանոնակարգում՝ նպատակների, մեթոդների, ցուցանիշների, իրականացման հաջորդական քայլերի, ժամկետ-ների և պատասխանատուների սահմանում: 2) Ոլորտների զարգացման ծրագրերի գնահատման համակարգերի մշակում և ներդնում: 3) Մոնիթորինգի արդյունքներով նախատեսվող գործողությունների կամ հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողության իրականացման դրույթի ներառում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	2011թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ
16.	«Կրթական ծրագրերի իրականացման լիցենզա-վորման հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ կրթության և գիտության նախարարության « Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողով» ստեղծելու և	1) Հանձնաժողովի քարտուղարի՝ հանձնաժողովի անդամներին նիստից առնվազն 7 օր առաջ նիստի անցկացման վայրի և ժամկետի մասին գրավոր կամ բանավոր տեղեկացման դրույթի սահմանում: 2) Տեղեկատվության՝ մամուլում կամ նախարարու-թյան կայքէջում հրապարակման պարտադիր պահանջի սահմանում: 3) Նիստի նյութերը (կամ միայն օրակարգը) հանձնաժողովի անդամներին նիստի օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ տրամադրման պահանջի սահմանում: 4) Հանձնաժողովի քարտուղարի գործառույթների	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ

	«Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» N 1253-Ն հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին նախարարի հրամանի մշակում և հաստատում	հստակեցում՝ նիստի ժամանակ յուրաքանչյուր հարցի վերաբերյալ հանձնաժողովի կողմից որոշում կայացնելու դեպքում եզրակացություն պատրաստում և հանձնաժողովի՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմից եզրակացության ստորագրման ապահովում, հրավիրված անձին նիստի ավարտից հետո եզրակացության հանձնման կամ պատշաճ ձևով ուղարկման դրույթի սահմանում:		
17.	«ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահի 2009թ.հուլիսի 24-ի «Գիտական կենտրոնի ձևավորման գործընթացը համակարգող հանձնաժողով ստեղծելու մասին» N30-Ա/Ք հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահի հրամանի նախագծի մշակում և հաստատում	1) Հրամանի վերնագրի վերաշարադրում հետևյալ խմբագրությամբ « Գիտական կենտրոնի ձևավորման գործընթացը համակարգող հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» 2) Հանձնաժողովի աշխատակարգի հաստատում, իրավասությունների շրջանակի սահմանում: 3) Հանձնաժողովի քարտուղարի նշանակման դրույթի ներառում, քարտուղարի գործառույթների ամրագրում: 4) Կենտրոնի ստեղծման մերժման հիմքերի սահմանում: 5) Հանձնաժողովի կողմից եզրակացության ներկայացման ժամկետի սահմանում:	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	2011թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ
18.	«ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահի 2010թ.	1) Հրամանով հաստատված հայտի ձևի լրամշակում՝ դեռևս չստեղծված գիտական	ՀՀ կրթության և գիտության	2011թ. դեկտեմբերի 2-րդ

	նոյեմբերի 16-ի «Գիտական կենտրոնի ստեղծման հայտի ձևը հաստատելու մասին» N42-Ա/Ք հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահի հրամանի նախագծի մշակում և հաստատում	կենտրոնի տնօրենի մասին հայտում տեղեկատվության լրացման և հայտի տակ ստորագրության պահանջի վերացում: 2) Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի հաստատում: 3) Գիտական աշխատությունների ներկայացման պահանջը՝ աշխատությունների ցանկի ներկայացմամբ փոխարինում: 4) Գործընթացի իրականացման քայլերի համար ժամկետների սահմանում:	նախարարության գիտության պետական կոմիտե	տասնօրյակ
19.	«ՀՀ կրթության և գիտության նախարարության վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վիճակագրական ռեգիստրների վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	1) Վարչական վիճակագրական հաշվետվությունների ներդրման իրավական դաշտի ապահովում՝ առաջնորդվելով "Պետական վիճակագրության մասին" ՀՀ օրենքով և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 10.05.2002թ. "Վարչական(տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին" N 109 որոշմամբ: 2) Կրթության և գիտության ոլորտների վիճակագրական տվյալների հավաքագրման, շտեմարանների ստեղծման և վարման, տվյալների վերլուծման և հրապարակման գործընթացների հաջորդական քայլերի, դրանց ժամկետների և պատասխանատուների սահմանում: 3) Հաշվետվությունների ձևերի մշակման և ներդրման ժամանակացույցի հաստատում՝ ՀՀ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	2011թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ

		ազգային վիճակագրական ծառայության հետ համաձայնեցված:		
20.	«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմում համակարգչային տեխնիկայի սպասարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	Համակարգչային տեխնիկայի սպասարկման գործընթացի կանոնակարգում՝ գործընթացի հաջորդական քայլերի իրականացման ժամկետների և պատասխանատուների սահմանում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ
21.	«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքի կառուցվածքի և սպասարկման մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում	Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքի կառուցվածքի և սպասարկման հարցերի կանոնակարգում, գործընթացի հաջորդական քայլերի իրականացման ժամկետների և պատասխանատուների սահմանում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ
22.	«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ծառայողական ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և շահագործման կարգը և	Նախարարությանը տրամադրված ծառայողական ավտոմեքենաների բաշխման, շահագործման, ընթացիկ նորոգման և պահպանման հարցերի կանոնակարգում՝ գործընթացի հաջորդական քայլերի իրականացման ժամկետների և պատասխանատուների սահմանում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2011թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ

	պայմանները հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի մշակում և հաստատում			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ